ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	**Միջոցառման անվանումը**	**Օրը**	**Ժամը**	**Անցկացման վայրը**
Շնող	Ավագանու հերթական նիստ	19.06.2020	17:30	**Շնող համայնքի ղեկավարի աշխատասենյակ**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020 թ. հունիսի 19-ին՝ ժամը 17:30-ին , ՀՀ Լոռու մարզի Շ ն ո ղ համայնքի ավագանու ՝ Շնողի համայնքի ղեկավարի աշխատասենյակում կայանալիք հերթական նիստի

ժամը՝ 17:30

1.1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու 19 հունիսի 2020 թվականի թիվ 8 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

Զեկ.՝ Դ.Ղումաշյան

1.2 «Շնողի մանկապարտեզ» և «Թեղուտի մանկապարտեզ» Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները լուծարելու և լուծարային հանձնաժողով ստեղծելու մասին

Զեկ.՝ Դ.Ղումաշյան

1.3 «Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին»

Զեկ.՝ Հ. Ճիճիլյան

1.4 «Առանձին անձանց հողի հարկի և գույքահարկի տույժերից ազատելու մասին»

Զեկ.՝ Մ. Ալիխանյան

ՆԱԽԱԳԻԾ 46-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 19 ՀՈՒՆԻՍԻ 2020
ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***Շնող համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 19-ի թիվ 8 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝
1.1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու 19 հունիսի 2020 թվականի թիվ 8 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
1.2«Շնողի մանկապարտեզ» և «Թեղուտի մանկապարտեզ» Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները լուծարելու և լուծարային հանձնաժողով ստեղծելու մասին :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՀԵՂԻՆԵ ՃԻՃԻԼՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 47-Ա

«ՇՆՈՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»
ԵՎ «ԹԵՂՈՒՏԻ
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ ԼՈՒԾԱՐԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ*

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 67-րդ, 68-րդ և 69-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի՝ ***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանին որոշում է.***

1.Լուծարել «Շնողի մանկապարտեզ» և «Թեղուտի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները:
2. ՈՒԺը կորցրած ճանաչել.
2.1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 44-Ա որոշումը
2.2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թեղուտ համայնքի ավագանու 2011 թվականի մայիսի 10-ի «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ԹԵՂՈՒՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԸ «ԹԵՂՈՒՏԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ»ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌևՏՐԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ /ՀՈԱԿ/ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 7 որոշումը:
3. Ստեղծել լուծարային հանձնաժողով՝ հետևյալ կազմով
3.1 Հեղինե Ճիճիլյան - Շնողի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի նախագահ
3.2 Արտակ Բայրամյան - Շնող համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ"
3.3 Միեր Շահնազարյան - Շնող համայնքի ավագանու անդամ,

հանձնաժողովի անդամ
3.4 Անգին Մկրտումյան -«Շնողի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնտեսվար
3.5 Անուշ Մղդսյան -«Շնողի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հաշվապահ
3.6 Արմինե Չալիկյան - «Թեղուտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հաշվապահ
3.7 Ֆրունզե Նորեկյան - Թեղուտ վարչականտարածքի ղեկավար
3.8 Սվետլանա Մելիքսեթյան -Շնողի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ
4.Լուծարային հանձնաժողովին՝ 2-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավարտել կազմակերպության լուծարման գործընթացը:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՀԵՂԻՆԵ ՃԻՃԻԼՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 48-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ
ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՀԵՂԻՆԵ ՃԻՃԻԼՅԱՆ*

Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 21-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 18-Ա որոշմանը համապատասխան,հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացություն(ներ)ը՝ **Շնող համայնքի ավագանին որոշում է.**

1. Բավարարել ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում վճարել հատկացված գումարը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՀԵՂԻՆԵ ՃԻՃԻԼՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 49-Ա

ԱՌԱՆՁԻՆ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՄԱՆՅԱԿ ԱԼԻԽԱՆՅԱՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Գույքահարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողի հարկի մասին» օրենքի 10-րդ հոդվածի «ժ» կետով՝ ***Շնող համայնքի ավագանին որոշում է .***

1.Ձեղչել այն անձանց հողի հարկի և գույքահարկի տույժերը, ովքեր ամբողջությամբ մարել են հողի հարկի և գույքահարկի մայր գումարները:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՀԵՂԻՆԵ ՃԻՃԻԼՅԱՆ